ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Աբգարյան,

ի պատասխան Ձեր 01.03.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ «Երևանի Նվեր Սաֆարյանի անվան հ. 164 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն ընդգրկված է ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հուլիսի 23-ի հ. 797 որոշման հավելված N2-ով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում սեյսմակայունության տեսակետից առավել վտանգավոր դպրոցների ցանկում:

Հանրակրթական ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի հիմնանորոգումը, սակայն, ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է ըստ առաջնահերթությունների, և ըստ այդմ՝ նշյալ դպրոցին ամրացված շենքի հիմնանորոգումը դեռևս նախատեսված չէ ՀՀ կառավարության՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրով սահմանված ցանկում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ